Գարա—Քիլիսէի, Ուչ—Քիլիսէի, Ծաղկոտն գաւառի և Անդափի տեղագրութիւնը կը ցանկայի առանձին հատորի մէջ ամփոփել, սակայն ցարդ գրութիւններս չը կարողացայ ի մի հաւաքել և դեռ պէտք եղած կարևոր տեղեկութիւններ քաղել և լրացնել գործս՝ որով ստիպուած եմ միայն հարևանցի ակնարկ մի ձգել՝ Ա. Գարա—Քիլիսէի վիճակի վերան, որ Ալաշկերտի վիճակին յարևելս կայ։ Բ. Ուչ—Քիլիսէի վերան, որ Գարա—Քիլիսէի դաշտէն բաժանուած, որոյ յարևելս (քիչ հարաւ արևելախառն) Ձիրաւայ դաշտն է։ Գ. Ծաղկոտն գաւառի վերան, որ Գարա—Քիլիսէի հարաւն և Նպատ լերան յարևմուտս կը տարածուի։ Դ. Անդափի վիճակի վերան, որ Ալաշկերտի հարաւն և Ծաղկոտն գաւառի յարևմուտս կայ։ Թէև սորանով չեմ կարողացած բանասիրաց հետաքրքրութիւնը գոհացնել ինչ որ հարկն էր. թէև աւելի հետաքրքրական վայրերն, որք են Անդափ և Ծաղկոտն գաւառակներն, ուր հնութիւններով լի են, սակայն այժմ այդ վայրեր հայկական բնակութենէ բոլորովին զուրկ լինելով՝ չեմ կարողացած քանիցս երթևեկութիւն կատարել և գրի առնել. այլ այս երկու վայրերու միջէն մի մի անգամ անցած լինելով՝ գոնէ դիրքն կը ներկայացնեմ այստեղ. և կարգ մի գիւղերու անուանք զորս քաղած եմ նոյն վայրաց ծանօթ անձերէ և քանիցս հարց ու փորձ անելով։